



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀՈՒշարձութեան

2019





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՏՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀՈՒՆԴԱՐԱՆՆԵՐ  
2019



Հ Ա Կ Բ Կ Ա 2020



## Արքունի Չավաղյան

ՀՀ կենտրոնական բանկի  
նախագահ

### Հարգելի ընթերցող

Սիրով ներկայացնում ենք «Հայաստանի Հանրապետության հուշադրամներ» սարելան դարբերականը, որը նվիրված է 2019 թ. ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված հուշադրամներին:

Տարին առանձնահատուկ էր մեր ժողովրդի համար մեծ նշանակություն ունեցող դասմական մի շարք իրադարձություններով և հայ անվանի անհամեթի հորելյանական սարեդարձերով, որոնք իրենց արտացոլումն են զտել ՀՀ կենտրոնական բանկի թողարկումներում:

2019 թ. ՀՀ կենտրոնական բանկը թողարկել է հուշադրամներ՝ ի նշանավորումն հայ ազգի մեծ նվիրյալներ Հռվիաննես Թումանյանի և Կոմիտասի 150-ամյա սարեդարձերի: Այդ հորելյանները, հիրավի, ունեն ոչ միայն ազգային, այլև համամարդկային մեծ հնչեղություն ու նշանակություն: 19-րդ դարի

վերջի - 20-րդ դարասկզբի այս մեծանուն գործիչներն իրենց ուրույն տեղն են գրադարել հայ մշակույթի դասմության մեջ՝ գրականության և երաժշտության ոլորտներում ունեցած հաջողությունների և վասակի ընորհիվ: Հայ ժողովրդի համար ծանրագոյն բաղաբական ու սոցիալական դպյամաններում նրանք դարձել են հայ ոգու վերաբրումի և հաղթանակի խորհրդանշներ:

2019 թ. հորելյանական թողարկումներից են բարերար Գալուս Գյուլբենյանի և նկարիչ Վարդան Մախոխյանի 150-ամյա ու Ծովակալ Խակովի 125-ամյա տարեղարձերին նվիրված հուշարձանները: Դրանք հնարավորություն են ընձեռում ոչ միայն լայնորեն լուսաբանելու (հուշարձաններին կից եռալեզու բուկլետների միջոցով) հայ նվիրյալների ներդրումը մայր հայրենիքի սննեսական ու մշակութային զարգացման գործում, խաղաղության ու երկրի բարօրության ուղղված ջանքերը, այլև հավերժացնելու նրանց համբավը միջազգային աստղարեզում:

Տարին առանձնահատուկ էր նաև Եվրափական սննեսական միության 5-ամյա հորելյանով: Այս իրադարձության առթիվ թողարկվել է «Եվրափական սննեսական միության 5 տարին» գեղեցիկ հուշարձանը՝ նշանավորելով 5 տարիների ընթացքում անդամ դեմությունների ձեռքբերումները սննեսական կատերի ընդլայնման և միասնական սննեսական բաղաբականության ամրագնդման գործում:

2019 թ. նշվեցին նաև համազգային կրթական և մշակութային նշանակություն ունեցող հասարակությունների՝ Հայաստանի դարավոր դամության ու մշակույթի անխոս վկա Հայաստանի դամության քանզարանի և Երևանի դեսական համալսարանի 100-ամյա հորելյանները: ՀՀ կենտրոնական բանկը ձեռնարկեց այդ կարևոր իրադարձություններին նվիրված հուշարձանների թողարկումը:

Ուսագրավ է, որ թողարկումների շարքում տեղ գտավ «Կովկասյան ընձառյուծի տարի» հուշարձանը, որն ամրագրեց այդ հազվագյուտ կենդանու վերադարձը Հայաստանի Հանրապետության Խորսրության անտառ-արգելոց: Հնամենին բնակության վայրում ընձառյուծի կրկին հայտնվելը դարձավ Հայաստանի չհնադիր բնության ու կենդանական աշխարհի յուրօրինակ խորհրդանշիը:

Խոսք կցանկանայի ավարտել ուրախալի իրադարձության հավասարմաք. 2019 թ. Ռուսաստանի Դաշնությունում անցկացված «Դրամների համաստեղություն» 13-րդ միջազգային մրցույթում ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2018 թ. թողարկված «Երևան-2800» արծաթե հուշարձանը՝ «Տարվա հուշարձան» անվանակարգում արժանացել է դարվագոր մրցանակի: Այս հերթական մրցանակը, ինչորական և 2019 թ. թողարկումների որակն ու գեղարվեստական բարձր մակարդակը, անկանությանը, ՀՀ հուշարձանների թողարկումը համակարգող աշխատակիցների միասնական և արհեստավարժ աշխատանի վառ աղացույցն են:



## Սույն Սիմոնյան

Արժույթի քողարկման  
համակարգման կենտրոնի  
ղեկավար

# ՀՈՒՇԱՐԱՍԵՐ 2019

2019 թ. ՀՀ կենտրոնական բանկը քողարկել է ինը տեսակի հուշարձան, որն նշից ուրը՝ հորելյանական: Ինչպես և նախորդ տարի, հորելյանական հուշարձանների մեծ մասը հատվել է Լիսվայի դրամահատարանում համարելով հուշարձանների՝ «Անվանի անհատներ», «Հայաստանը և միջազգային հանրությունը» և «Մշակույթ» թեմատիկ շարժերը:

Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված մեկ ֆառոր ունեցիա բառով ունենալու աշխի է ընկնում հայ մեծանուն գրողի դիմադրակերի արտահայտչականությամբ և սվյալ բաշխ ներհատուկ փոնք մակերեսի վրա գրողի ստեղծագործական ժառանգության հատվածների նանրատառաշար դասկերմամբ: Գալուս Գյուլբենկյանի ծննդյան 150-ամյակին նվիրված ոսկե մեկ այլ հուշարձանի քողարկմամբ շարունակվել է 2017 թ. մեկնարկած «Պետական և հասարակական գործիչներ» ենթաքեման՝ դահլանելով հուշարձանի դիմերեսին հայ բարերարի հավաքական կերպարը խորհրդանուղ հուշարդողի դասկերման ավանդույթը:

Երածության ոլորտում «Անվանի անհաներ» շարք համարվել է «Կոմիտաս-150» արձաբե հուշադրամով: Հուշադրամը հատվել է բազմաւեց բարձրադիր փորագրության եղանակով, իսկ դարձերեսին դասկերված երգահանի դիմանկարն ու այլ ոճավորված դասկերները ամբողջացրել են հայ մտավորականի և երածուազետի բացառիկ կերպարը: Կերպարվեսի ոլորտում «Անվանի անհաներ» թեման այս սարի ներկայացվեց «Վարդան Մախոյսյան-150» ուղանկյունաձև արձաբե հուշադրամով: Հուշադրամի դասրասնան որակը լավացված է, իսկ դիմերեսին և դարձերեսին սամղութագրության եղանակով դասկերված են հատվածներ նկարչի կտավներից: «Անվանի անհաների» «Հայ զորավարներ» թեմայիկ շարք համարել է Ծովակալ Խաչովի ծննդյան 125-ամյակին նվիրված հուշադրամը: Այն դասրասնաված է դասական ոճով: Հուշադրամը կլոր է, իսկ դիմերեսի և դարձերեսի դասկերներն արտացոլում են ծովակալի ռազմածովային գրծունեությունը՝ հուշադրամը դարձելով բռվանդակալից ու տպավորիչ:

Հայաստանի դասմության թանգարանի և Երևանի դեւական համալսարանի հիմնադրման 100-ամյա հորելյաններին նվիրված արձաբե հուշադրամներն առանձնանում են սեխնիկական բարդ լուծումներով, որոնց ընորհիկ հնարավոր է դարձել ներկայացնել մանր սարրեր դարունակող դասկերներ: Այդ հուշադրամները ևս դասրասնաված են դասական ոճով և լավագույնս արահայտում են երկու հաստատությունների ազգային կեինու ու նշանակությունը:

Ի նշանավորումն Եվրասիական Տնտեսական միության կազմավորման 5-ամյա տարելիցի՝ ՀՀ կենսրունական բանկը, միանալով Եվրասիական Տնտեսական միության մյուս անդամ դեսություններին, թողարկել է «Եվրասիական Տնտեսական միության 5 տարին» արձաբե հուշադրամը: Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների դրամահատարանում: Դիմերեսին դասկերված են առաջ պլացող առազատներ, որոնք խորհրդանուում են երկրների առաջընթացը Տնտեսական համագործակցության ոլորտում, իսկ դարձերեսին սամղութագրության եղանակով ներկայացված են անդամ դեսությունների դրույթը ու ոճավորված դասկերները:

Տեխնիկական հետարքի լուծումներով է թողարկվել «Կովկասյան ընձառյուծի տարի» հուշադրամը: Այն կլոր է, դասրասնաված է ՀՀ կենսրունական բանկի թողարկումներին բնորոշ դասական ոճով և, միաժամանակ, աչքի է ընկնում ընձառյուծի դասկերի լուսանկարային տեխնոլոգիայի (Minted Photo Image) կիրառմամբ:

2019 թ. թողարկված բոլոր հուշադրամները մեծ հետարքրություն են առաջացրել ինչպես հավանողների, այնպես էլ հասարակության լայն շրջանում:




## Հովհաննես Թումանյան

Ծննդյան 150-ամյակ

Թեսև՝ Անվանի անհատներ

Գրականություն



Դիմերես՝ հայված Հ. Թումանյանի «Ախրամար» դրեմից և  
դրվագ դրեմի նկարազարդումից (գործ՝ Ս. Աբեղյան):  
Դարձերես՝ Հ. Թումանյանի դիմադրամակերը և ստորագրությունը:

Էսիրզմերի հեղինակն է Վարդան Վարդանյանը:  
Հասլել է Լիսլայի դրամահատարանում:  
Ծրանառության մեջ է դրվել 12.02.2019 թ.:



ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ (1869-1923 թթ.) հայ մեծանուն գրող է, բանաստեղծ, հասարակական գործիչ:

Նախնական կրությունը ստացել է Հայաստանի Լռու մարզի Դսեղ գյուղում: Ուսումը շարունակել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Աշխատակցել է հայկական տարբեր թիրթերի ու ամսագրերի: 1912-1921 թթ. նախագահել է Հայ գրողների կովկասյան ընկերությունը:

1899 թ. Թումանյանի նախաձեռնությամբ ստեղծվել է «Վերնատուն» գրական խմբակը, որը միավորել է բազմաթիվ հայ նշանավոր գրողների ու բանաստեղծների:

Թումանյանի գրական ժառանգությունը բազմացն է: Որդես բանաստեղծ հայտնի է դարձել


Անվանական արժեքը	10 000 դրամ
Մետաղ/հարզը	ոսկի 900°
Քաշը	8,6 գ
Տրամագիծը	22,0 մմ
Ուրակը	դրուֆ
Դրամաշուրը	առամնավոր
Տղափանակը	500 hws

1890-ական թթ. «Բանաստեղծություններ» երկինառյալի լույսընծայումից հետո: Ստեղծագործական սկզբունքներն առավել ցայտուն են դրսուրվել Թումանյանի դրեմներում («Մարն», «Լռուցի Սարն», «Անու», «Սասունցի Դավիթ»), բալլարդներում ու հետիաբներում («Այսրամար», «Թմնկարերի առումը», «Մի կարի մելր», «Տերն ու ծառան», «Քաջ Նազար»), դասմվածքներում («Գիֆորը», «Իմ ընկեր Նետն») և բարյակներում, որոնց հիմքում ժողովրդական մտածողությունն ու բանահյուսությունն է:

Թումանյանը նաև հեղինակ է բազմաթիվ գրականագիտական հոդվածների:

Առաջին համաշխարհային դաշտեազմի տարիներին Թումանյանը մեծ աշխատանք է ծավալել Արևմտյան Հայաստանից գաղթածներին, հաւկադես որք երեխաներին օգնելու համար:


Թումանյանի բազմաթիվ երկեր բարգմանվել են աշխարհի տարբեր լեզուներով, ներկայացվել են երաժշտության, կինոյի և գեղանկարչության ժանրերում:



## Գալուստ Գյուլբենկյան Ծննդյան 150-ամյակ

Թիմս՝ Անվանի անհատներ

Պետական և  
հասարակական  
գործիչներ



Դիմերես՝

հայ բարերարի հավաքական կերպարը խորհրդանուղ  
հուշակորողը («Հայ բարերարների ձեմուղի» հուշահամալիր,  
հեղինակ՝ Ֆերդինան Առաքելյան) և

«ԵՐԱՄԱՍԱՊՐՈՒԹՅՈՒՆ» երկեզու մակագրությունը:

Դարձերես՝

Գ. Գյուլբենկյանի դիմանկարը և ստորագրությունը:

Էսիզների հեղինակներն են Հարություն Սամուելյանը (դիմերես) և

Վարդան Վարդանյանը (դարձերես):

Հատվել է Լիտվայի դրամահատարանում:

Ծրանառության մեջ է դրվել 22.03.2019 թ.:

**ԳԱԼՈՒՍ ԳՅՈՒԲԵՆԿՅԱՎԱԾ (1869-1955 թթ.)** հայ մեծանուն գործարար է և բարեգործ: Նա անցյալ դարասկզբին նավթաշխարհի հեղինակավոր ներկայացուցիչն էր և նավթային դիվանագիտության մեջ ամենաազդեցիկ դեմքերից մեկը: Ուսումնասիրել է Միջազգեսքի նավթի դաշտները և զբաղվել նավթի արտահանմամբ: 1930 թ. Փարիզում ընտրվել է Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ:



Անվանական արժեքը	10 000 դրամ
Մետաղ/հարգը	ոսկի 900°
Քաշը	8,6 գ
Տրամագիծը	22,0 մմ
Ուրակը	դրուֆ
Դրամաշուրը	առամնավոր
Տղամանակը	1000 hours

Գյուլբենկյանի կտակի համաձայն՝ 1956 թ. Լիսարբում հիմնվել է «Գալուս Գյուլբենկյան» հիմնադրամը, որը ֆինանսական մեծ աջակցություն է ցուցաբերել Սփյուռքի հայ մշակութային միություններին, հայկական դպրոցներին և հոգևոր հասանություններին, կրթարուսակեներ տրամադրել հայ աշակերտներին և ոսանողներին:

Գյուլբենկյանը ձեռք է բերել արվեստի գործերի, մետաղադրամների և արվեստագիտական գրերի հարուստ հավաքածու, որն այժմ ներկայացված է Լիսարբում, աշխարհի բացառիկ՝ Գալուս Գյուլբենկյանի բանգարանի ցուցասրահներում:

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 100-ԱՄՅԱԿ



Թիմա՝ Մշակույթ

Գիտություն,  
գրականություն

Դիմերես՝

հայ գիտնականներին նվիրված հուշասյան հատված (գտնվում է Երևանի դեռական համալսարանի սրահում, բանդակագործ՝ Վահան Ղազարյան, ճարտարապետ՝ Լևոն Բալայան, ճարտարագետ՝ Սու Մանուկյան) և «SCIENTIA POTENTIA EST» մակագրությունը:

Դարձերես՝

«Սահակ Պարքի և Մեւրող Մատսոց» խմբաժանդակից հատված (գտնվում է Երևանի դեռական համալսարանի մուսֆի մոս, բանդակագործ՝ Արա Սարգսյան, ճարտարապետ՝ Ռոմեն Զովհակյան): Ֆոնդին ԵՊՀ ժենիֆեր ուրվագծի և գերի դասկերներն են:

Էսիդզմերի հեղինակներն են Հարություն Սամուելյանը (դիմերես) և Վարդան Վարդանյանը (դարձերես):

Հասվել է լիսվայի դրամահատարանում:

Ծրանառության մեջ է դրվել 16.05.2019 թ.:

**Ե**րևանի համալսարանը հիմնվել է Հայաստանի առաջին Հանրապետության նախարարների խորհրդի 1919 թ. մայիսի 16-ի որոշմամբ: Համալսարանի բացման հանդիսավոր արարողությունը տեղի է ունեցել 1920 թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի), իսկ դասերի մեկնարկը տրվել է անվանի հայագետ Ստեփան Մալխասյանից դասախոսությամբ: Նոյն թվականի դեկտեմբերին բուհը վերակազմվել և վերանվանվել է Երևանի ժողովրդական համալսարան, իսկ 1923 թ. սացել է դեռական համալսարանի կարգավիճակ:

Երևանի դեռական համալսարանում դասախոսել են հայ նեանապոր գիտնականներ Հ. Մանադյանը, Մ. Աբեղյանը, Հ. Աճայյանը, Լեռն, Գ. Ղափանցյանը և այլք:



Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղ/հարգը	արծար 925°
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Ուրակը	դրոֆ
Դրամաշուրը	առամնավոր
Տղամանակը	500 hours

Հայաստանի մայր բուհում այսօր մասնագիտանում են հազարավոր ուսանողներ, իրականացվում են ժամանակակից գիտության ասրը ոլորտներին առնչվող հիմնարար և կիրառական հետազոտություններ, իրադարձություններ գիտական դարբերականներ:



# Վարդան Մախոկյան

## Ծննդյան 150-ամյակ

Թիմս՝ Անվանի անհատներ

Կերպարվես



Դիմերես՝ Վարդան Մախոկյանի «Կատրի կղզու ափերը» կտավից դրվագ:  
Դարձերես՝ Վարդան Մախոկյանի «Անիանգիս ծովը. Ափ» կտավից դրվագ:

Էսիզմերի հեղինակն է Լուսինն Լալայանը:

Հատվել է Լիտվայի դրամահանարանում:

Օքանառության մեջ է դրվել 31.05.2019 թ.:

**ՎԱՐԴԱՍ ՄԱԽՈԽՅԱՆԸ (1869-1937 թթ.)**  
աշխարհահոչակ հայ ծովանկարիչ է:

Ծնվել է Տրամիզոնում (Արևմտյան Հայաստան):  
Սովորել է Բեռլինի գեղարվեսի ակադեմիայում,  
այնուհետև ուսումը շարունակել Հովհաննես Այվա-  
զովսկու արվեստանոցում: 1904 թ. դարձել է Բեռլի-  
նի Արվեստագետների միուրյան անդամ: Ստեղծա-  
գրութել է Տրամիզոնում, Բեռլինում, Լոնդոնում, իսկ  
Առաջին համաշխարհային դաշերազմից հետո  
հաստավել է Նիսում:

Մախոխյանը վճճել է ծովային ժեսարաններ և  
բնանկարներ («Տրամիզոնի վանքը», «Հուզված ծո-  
վը Վերջալուսին», «Ալիք»), որոնք աչքի են ընկնում  
գունային նուրբ երանգներով և իրականության խոր  
զգացողությամբ:

Մախոխյանի կտավները ցուցադրվել են Կահի-  
րում, Ալեքսանդրիայում, Մյունիստում, Դյուսել-  
դորֆում, Բեռլինում, Նիսում, Լոնդոնում, Մարտե-



Անհանգիս ծովը. Ափ

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղ/հարզը	արծաք 925°
Քաշը	28,28 գ
Չափը	28,0 x 40,0 մմ
Որակը	լավացված
Դրամաշուրբը	հարք
Տղամանակը	500 hours



Ծովը Վերջալուսին

լում, Փարիզում: Նկարչի գործերը դահվում են Հա-  
յաստանի ազգային թանգարանում, Մայր Աթոռ  
Սուրբ Էջմիածնի, Նիսի գեղարվեսի, Կառունասի  
Մ. Ջուլյոնիսի անվան, Վենետիկի Միլիթարյան  
միարանության թանգարաններում և մասնավոր  
հավաքածուներում: 1925 թ. Ֆրանսիայում Վարդան  
Մախոխյանը արժանացել է Պատվո լեզվոնի շքա-  
նուանի:



## Ծովակալ Իսակով

Ծննդյան 125-ամյակ

Թեևս՝ Անվանի անհատներ

Հայ զորավարներ

Դիմերես՝

Ծովակալ Իսակովի անվան հածանավի, ծովակալի ուսադրի աստիճան, նաև ու իշարչի ղատկերներ:

Դարձերես՝

Ծովակալ Իսակովի ղիմաղատերը և նավազմացի դառնությունը ու գրեթե ղատկերներ:

Էսիզմերի հեղինակն է Վարդան Վարդանյանը:

Հասվել է Լիտվայի դրամահատարանում:

Շրջանառության մեջ է դրվել 22.08.2019 թ.:

**ԾՈՎԱԿԱԼ ԻՍԱԿՈՎԸ (Հովհաննես Տեր-Խաչակիան, 1894-1967 թթ.)** անվանի հայ զինհրամանաւար է, Խորհրդային Միության նավատրնի ծովակալ (1955 թ.), ԽՄ հերոս (1965 թ.):



1913 թ. ավարտել է Թիֆլիսի ռեալական ուսումնարանը, 1917-ին՝ Պետրոգրադի գարդեմարինյան, 1928-ին՝ Լենինգրադի ռազմածովային ակադեմիայի բարձրագույն հրամակազմի կատարելագործման դասընթացները: Կյանքի մեծ մասը Խսակովը նվիրել է ծառայությանը նավատրնում, որ գրադեցել է բարձր դաշտների: 1932 թից դասավանդել է Ռուսական ակադեմիայում, իսկ 1938-1939 թթ. գրադեցել է դեևի դաշտները: Երկրորդ աշխարհամարտի տեղապահ ներդրում է ունեցել Սևծովյան և Բալթիկան նավատրների մարտ-

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղի հարգը	արծաթ 925°
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	դրուֆ
Դրամաշուրը	արամճավոր
Տղամանակը	500 համ

կան գործողությունների ոլանների մշակման գործում:

Ռազմածովային գործին զուգընթաց, Խսակովը գրադեցել է ռազմադամական և ռազմատեսական հարցերով, մասնակցել է Առաջին համաշխարհային դաշտազմի դաշտության փաստաբութերի ժողովածուների կազմմանն ու խմբագրմանը, ռազմածովային ուժերի մարտական կանոնագրերի մշակմանը: 1947 թ. նշանակվել է եռահատոր «Ծովային առլասի» խմբագրական կողեզրայի նախազանի:

Ուսուասանի Դատաւորյան ռազմածովային ուժերում ծովակալ Խսակովի անունով կա հածանավ, Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության բաղադրություն՝ փողոցներ:



# ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ 5 ՏԱՐԻՆ



Թեևս՝ Հայաստանը և  
միջազգային հանրությունը

Դիմերես՝ ՀՀ զինանշանը և ԵԱՏՄ անդամ ղետուրյունների խանակին  
համապատասխանող առաջասաների ու ասդերի դասկերներ:  
Դարձեր՝ ԵԱՏՄ դասկերները և ԵԱՏՄ անդամ ղետուրյունների  
դրույթը ոճավորված դասկերները:

Էսիզների հեղինակն է Էդուարդ Կուրդինյանը:  
Հատվել է Նիդեղանդների արքայական դրամահատանում:  
Շրջանառության մեջ է դրվել 12.09.2019 թ.:

**Ե**վրասիական սնտեսական միության (ԵԱՏՄ) մասին դայմանագիրը ուժի մեջ է մտել 2015 թ. հունվարի 1-ին: ԵԱՏՄ անդամ դեսություններն են՝ Հայաստանի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Մողոստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը:

Հորեւյանական 2019 թվականը նշանավորվում է ԵԱՏՄ մասին դայմանագրի ստորագրման 5-ամյա և եվրասիական ինտեգրման զաղափարի սկզբնավորման 25-ամյա ամրելացմանը: Այդ ժամանակահատվածում ԵԱՏՄ գործունեությունը կարգավորող մարմինների կողմից արձանագրվել են ԵԱՏՄ հաջողությունները ազգային սնտեսությունների արդիականացման ու համակարգված բաղաբականության իրականացման ոլորտներում, ինչպես նաև նախանշվել են միջոդեմական փոխգործողության հեռանկարները:

Բարձրագույն Եվրասիական սնտեսական խորհրդի 2019 թ. հերթական նիստը հյուրընկալող երկիրը Հայաստանի Հանրապետությունն էր:



ՀՈՒԾԱԴՐԱՍՍԵՐ 2019



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԱԿ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆգԱՐԱԿԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 100-ԱՄՅԱԿ



Թեմա՝ Մշակույթ

Գիտություն,  
գրականություն

Դիմելեն՝

նմուշներ՝ ՀՊԾ հավաքածուից՝ «Խմբագանդակ՝ մարտակառով» (Ք.ա. XV-XIV դդ., Լողի բերդ, քրնիզ, № 2728-12),

«Քարայծի արձանիկ» (Ք.ա. XIII-XII դդ., Արքիկ, քրնիզ, № 2173-553), «Քառանիվ կառք» (Ք.ա. XV-XIV դդ., Լաւենի, փայս, № 2009-609), «Կաւելու ոննաման» (Ք.ա. XXXVI դ., Արենի-1 բարանձավային համալիր, տեղամաս 3, Պղնձագարի դար, № 3194), «Զարդարիթեղ առյուծի դասկելով» (Ք.ա. VII դ., Կարմիր բլուր, քրնիզ, № 2783-193):

Դարձելեն՝

ՀՊԾ ընդունություն՝ Սարկ Գրիգորյան,  
Եղուարդ Սարապյան) և դասկելանիւր, հայկական զարդանախտ:

Էսիզների հեղինակն է Եղուարդ Կուրդինյանը:

Հասվել է Լիսվայի դրամահատարանում:

Շրջանառության մեջ է դրվել 19.09.2019 թ.:



Հայաստանի դամության թանգարանը (ՀՊԹ) հիմնադրվել է Հայաստանի առաջին Հանրապետության դառնամենու 9.09.1919 թ. 439 օրենքով՝ կազմավորվելով Կովկասի հայոց ազգագրական լճերության, Նոր Նախիջևանի հայկական հնությունների թանգարանների, Անիի Հնադարանի, Վաղարշապահ Մատենադարանի հավաքածուների հիման վրա: Թանգարանի առաջին սնօրենը հայտնի ազգագրագետ Երվանդ Լալայանն է:



Թանգարանի առաջնությունը Հայաստանի և հայ ժողովրդի դամությունն ու մշակույթը ներկայացնող թանգարանային առարկաների և հավաքածուների դահլիճնմբ, համալրումը, ուսումնասիրումը և հանրահոչակումն է:

Ըստ 400 000 առարկայից բարկացած ազգային հավաքածուն ներկայացված է հնագիտության, ազգագրության, դրամագիտության և վավերագրերի բաժիններով և այլին է Հայաստանի մշակույթի

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղ/հարգը	արծաթ 925°
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	դրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տղամանակը	500 hws

դամության ամբողջական դասկերը նախադամական ժամանակներից մինչև մեր օրերը:

1948 թվականից ՀՊԹ-ն հրատարակում է հայկական ձաւրարարականությանը, հնագիտությանը, ազգագրությանը, դամությանը նվիրված գիտական աշխատություններ, հնագիտական դեղումների գեկույցներ:





## Կոմիտաս Ծննդյան 150-ամյակ

Թեևս՝ Անվանի անհատներ

Երաժշտություն



Դիմելես՝

Կոմիտաս Վարդապետի գծանկարները, հատվածներ «Ազգային օրիներգ» առաջին տղագիր երգի (1891 թ.)՝ հայկական և եվրոպական նոտագրությամբ:

Դարձելես՝

Կոմիտաս Վարդապետի դիմադրակերպ, Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսնի (Ճարտարապետ՝ Հ. Արզարյան) ուղագիծը, կոունկի, հայկական և եվրոպական նոտաների ոճավորված դասկերներ:

Էսիգների հետինակներն են Վարդամ Վարդանյանը (դիմելես) և  
Էդուարդ Կուրդինյանը (դարձելես):

Հասվել է Լիսվայի դրամահատարանում:

Շցանսողության մեջ է որվել 26.09.2019 թ.:

**ԿՈՄԻՏԱՍՈՂ** (Սողոմոն Սողոմոնյան, 1869-1935 թթ.) աշխարհահռչակ հայ կոմոդիսնոր է, երաժեսագետ, երգիչ և խմբավար, հայկական կոմոդիսնորական դպրոցի հիմնադիր:

Սովորել է Էջմիածնի Գևորգյան հոգևոր ձեռարանում: 1895 թ. ձեռնադրվել է վարդապետ, որից հետո ուսումը շարունակել է Բեռլինում՝ համալսարանում և Ռ. Ծմիջի մասնավոր կոնսերվատորիայում: 1899 թ. վերադարձել է Էջմիածնին, ուսումնասիրել է հայ նոնագրությունն ու հոգևոր երաժշտությունը, ժողովրդական երգեր հավաքել: 1910 թ. սեղափոխվելով Վ. Պոլիս՝ ստեղծել է երգչախոսնք, բազմաթիվ համերգներ սվել: Հայ ժողովրդական և հոգևոր երգերի իր մօսակոմները ներկայացրել է աշխարհի տարբեր ֆաղաքներում: Ժամանակի մամուլում նշվել է Կո-



Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղ/հարգը	արծաթ 925°
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	դրուֆ
Դրամաշուրբը	առամնավոր
Տղաքանակը	500 համ

միհասի արվեստի նշանակությունը ոչ միայն հայերի, այլև Արևելի այլ ժողովուրդների երաժշտության զարգացման գործում:

1915 թ. Հայոց ցեղասպանությունը ընդհատեց Կոմիհասի բեղմնավոր գործունեությունը. անցնելով Եղենճի սարսափիներով և վերադրելով անմարդկային սառադաններն ու մղձավանջր՝ նա կորցրեց

մավոր հավասարակուությունը և մինչև կյանքի վերջը չաղաքինվեց:

Կոմիհասի ստեղծագործությունները բազմաժամկետ և երևան են բնորում հայ մելիքու գեղեցկությունն ու ինքնատիղությունը: Կոմիհասի երաժշտական ժառանգությունը դատմամշակութային խունը հայժմագործություն է:

Կոմիհասի անունով են կոչվում Երևանի դեսական կոնսերվատորիան, Հայաստանի դեսական լարային ֆառյակը, Կամերային երաժշտության տունը, երաժշտական դպրոց Ստեփանակերսում և այլն: Կոմիհասի արձաններ են կանգնեցված Երևանում, Էջմիածնում, Փարիզում և այլուր:

# ԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆՉԱՐՅՈՒԹԻՒՆԻ ՏԱՐԻ



Թեսն՝ Բնություն  
Կենդանական աշխարհ



Դիմերես՝

ՀՀ զինանշանը և «Խուրովի անտառ» ղետական արգելոցի համայնադրասկերը:

Դարձերես՝


կովկասյան ընձառյուծի դասկերը «Խուրովի անտառ» ղետական արգելոցի ֆոնին (լուսանկարն արվել է Վայրի բնության և մշակութային արժեների դահդանանան հիմնադրամի կողմից) և «Panthera Pardus Ciscaucasica» գրառումը:

Էսիզների հեղինակն է Արամ Ուռույշյանը:

Հասվել է Նիդեղլանդների արքայական դրամահատարանում:

Շրջանառության մեջ է դրվել 02.10.2019 թ.:

**2019** թվականը «Հարավարություն» հոչակել է կովկասյան ընձառյուծի տարի: Այս նախաձեռնության շրջանակներում իրականացվող միջոցառումները նոյանում են անհետացման եզրին գտնվող կենդանիների մասին տեղեկատվության լայն լուսաբանմանը, ինչպես նաև բնության դադարանության և էկոտուրիզմի զարգացման տեսանկյունից հասարակության իրազեկման ասիժանի բարձրացմանը:



Անվանական արժեք	1000 դրամ
Մետաղ/հարզ	արծաթ 925°
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	իրուփ
Դրամաշուրբ	առամճակար
Տղամանակը	700 hours

Կովկասյան ընձառյուծը (*Panthera Pardus Ciscaucasica*) ինչպես աշխարհում, այնուև էլ Հայաստանում ամենավանգված կենդանատեսակներից է: Ներկայումս կովկասյան ընձառյուծը գրանցված է «Հենդանիների Կարմիր գրքում և Բնության դադարանության միջազգային միության (IUCN) Կարմիր ցուցակում»:

Հայաստանում ընձառյուծը բնակվում է «Խոսրվի անտառ» լեռական արգելոցի կենտրոնական և արևելյան հատվածներից մինչև Գեղամա, Զանգեզուրի, Վայոց ձորի, Բարզումակի և Սեղմու լեռնաշղթաներն ընդգրկող տարածքներում:

2002 թ-ից իրականացվում է ընձառյուծի դադարանության ծրագիրը, իսկ «Խոսրվի անտառ» լեռական արգելոցում տեղադրված ֆոնդրակարդները 2018 թ. գարնանը առաջին անգամ նկարահանել են կովկասյան ընձառյուծ, որը վերադարձել է արգելոցի իր մեջական աղբեկալավայրը:

# Հայաստանի Հանրապետության հուշադրամների շարքերը և թողարկման տարեթվերը

(1994 - 2019)

## ՀԱՅՈՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### Պետականության դատմություն

Արցախ	(արծաթ, 1994 թ.)
Ազգային ժողովի շենքը	(արծաթ, 1995 թ.)
Արտեևյան բազավորություն	(արծաթ, 1995 թ.)
Արշակունյաց բազավորություն	(արծաթ, 1995 թ.)
Բագրատունյաց բազավորություն	(արծաթ, 1995 թ.)
Կիլիկյան բազավորություն	(արծաթ, 1995 թ.)
Հայաստանի Հանրապետության 10-ամյակ (1991-2001)	(արծաթ, 2001 թ.)
Հայաստանի Հանրապետության 15-ամյակ (1991-2006)	(արծաթ, 2006 թ.)
Հայաստանի Հանրապետության 20-ամյակ (1991-2011)	(արծաթ, 2011 թ.)
Հայաստանի Հանրապետության 25-ամյակ (1991-2016)	(արծաթ, 2016 թ.)
Հայաստանի Հանրապետության 25-ամյակ/ռուս.(արծաթ, 2016 թ.) (1991-2016)	
Հայաստանի առաջին Հանրապետության 100-ամյակ (1918-2018)	(արծաթ, 2018 թ.)

### Հայաստանի զինված ուժեր

Սարդարադաս	(արծաթ, 1994 թ.)
Հայաստանի զինված ուժեր	(ոսկի/արծաթ, 2005 թ.)
Հայոց բանակի կազմավորման 15-ամյակ	(ոսկի, 2007 թ.)
Շուշիի ազատագրման 15-ամյակ	(ոսկի, 2007 թ.)
Հայոց բանակի կազմավորման 20-ամյակ	(ոսկի/արծաթ, 2012 թ.)
Շուշիի ազատագրման 20-ամյակ	(ոսկի, 2012 թ.)
Հայոց բանակի կազմավորման 25-ամյակ	(ոսկի/արծաթ, 2017 թ.)
Շուշիի ազատագրման 25-ամյակ	(ոսկի, 2017 թ.)
Սարդարադասի հերոսամարտի 100-ամյակ	(արծաթ, 2018 թ.)

### Հայկական դրամներ

Ճախարակ	(արծաթ, 1994 թ.)
Ազգային դրամի 5 սարին	(արծաթ, 1998 թ.)
Ազգային դրամի 15 սարին	(արծաթ, 2008 թ.)
Ազգային դրամի 20 սարին	(արծաթ, 2013 թ.)
Ազգային դրամի 25 սարին	(արծաթ, 2018 թ.)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄԻԶԱՉՊԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱԿ-50	(արծաթ, 1995 թ.)
Հայաստան-Միջուռք համաժողով	(արծաթ, 1999 թ.)
Նոր հազարամյակ	(արծաթ, 2000 թ.)
Հայաստանը Ելքախորհրդի ամեամ	(արծաթ, 2001 թ.)
Միջազգային բնեուային տարի	(արծաթ, 2006 թ.)
ՀԱՊ-20 և ՀԱՊԿ-10	(արծաթ, 2012 թ.)
Եվրասիական Տնտեսական միություն	(արծաթ, 2015 թ.)
ՀԱՊ-25 և ՀԱՊԿ-15	(արծաթ, 2017 թ.)
Հայաստանի ԱՄՀՀՀԲ անդամակցության հորելյան	(արծաթ, 2017 թ.)
Եվրասիական Տնտեսական միության 5 տարին (արծաթ, 2019 թ.)	

## ԱՆՎԱՆԻ ԱՆՎԱՏՆԵՐ

### Հայ զորավարներ

Մարտալ Բարդամյան-100	(արծաթ, 1997 թ.)
Գարեգին Նժդեհ	(ոսկեզօծ արծաթ/արծաթ, 2001 թ.)
Մարտալ Բարձաշամյան-100	(արծաթ, 2006 թ.)
Անդրանիկ Օզանյան-150	(արծաթ, 2015 թ.)
Վարդան Մամիկոնյան-1625	(ոսկի, 2016 թ.)
Վարդան Մամիկոնյան	(ոսկի, 2016 թ.)
Ծովակալ Իսակով-125	(արծաթ, 2019 թ.)



### Պետական և հասարակական զործիչներ

Տիգրան Մեծ	(ոսկի, 1999 թ.)
Տիգրան Մեծ	(ոսկի, 2003 թ.)
Վրամաշաղոփակ արքա	(արծաթ, 2005 թ.)
Ալեքսանդր Մանթրացյան-175	(ոսկի, 2017 թ.)
Գալուստ Գյուլբենկյան-150	(ոսկի, 2019 թ.)

### Գիտություն

Անանիա Շիրակացի-1400	(արծաթ, 2005 թ.)
Արտեմ Միկոյան-100	(արծաթ, 2005 թ.)
Վիկտոր Համբարձումյան-100	(արծաթ, 2008 թ.)
Մովսես Խորենացի-1600	(արծաթ, 2010 թ.)
Լեռ-150	(արծաթ, 2010 թ.)
Հովհաննես Օրբելի-125	(արծաթ, 2012 թ.)
Բենիամին Մարգարյան-100	(արծաթ, 2013 թ.)
Ոսկան Երևանցի-400	(արծաթ, 2014 թ.)

### Գրականություն

Պուտիկին-200	(արծաթ, 1999 թ.)
Վիլյամ Սարգյան-100	(ոսկի, 2008 թ.)
Խաչատրյան Աբովյան-200	(ոսկի, 2009 թ.)
Բաֆֆի-175	(ոսկի, 2010 թ.)
Վահան Տերյան-125	(ոսկի, 2010 թ.)
Միսար Մեծարենց-125	(ոսկի, 2011 թ.)
Հովհաննես Շիրազ-100	(ոսկի, 2014 թ.)
Հովհաննես Թումանյան-150	(ոսկի, 2019 թ.)

## Կերպարվես

Արշլ Գորկի-100	(ոսկի, 2004 թ.)
Մարշրուտային 125	(ոսկի, 2005 թ.)
Հակոբ Գյուղյան-125	(ոսկի, 2006 թ.)
Հովհաննես Այվազովսկի	(արծաթ, 2006 թ.)
Ժան Գառզո-100	(ոսկի, 2007 թ.)
Վարդեն Սուրենյանց-150	(արծաթ, 2010 թ.)
Թեոդոր Աբենետովիչ	(արծաթ, 2010 թ.)
Թորոս Ռոստիմ-800	(ոսկի, 2011 թ.)
Ստեփան Աղաջանյան-150	(արծաթ, 2013 թ.)
Արա Բենարյան-100	(արծաթ, 2013 թ.)
Էդուարդ Խարբելյան-100	(արծաթ, 2014 թ.)
Փանոս Թերլեմեզյան-150	(արծաթ, 2015 թ.)
Արշակ Ֆերվարյան-150	(արծաթ, 2016 թ.)
Ալեքսանդր Բաժրենով-Մելիքյան-125	(արծաթ, 2016 թ.)
Հովհաննես Այվազովսկի-200	(ոսկի, 2017 թ.)
Հովհաննես Զարդարյան-100	(արծաթ, 2018 թ.)
Վարդան Մախոխյան-150	(արծաթ, 2019 թ.)

## Երաժշտություն

Արամ Խաչարյան-100	(ոսկի/արծաթ 2002 թ.)
Կոմիտաս	(ոսկի, 2006 թ.)
Սայաթ-Նովա-300	(ոսկի, 2012 թ.)
Կոմիտաս-150	(արծաթ, 2019 թ.)

## Կին, քայլուն, կրկես

Լեռնիդ Ենգիբարյան-75	(արծաթ, 2010 թ.)
Մերգեյ Փարաջանով	(արծաթ, 2012 թ.)
Վահրամ Փափազյան-125	(ոսկի, 2013 թ.)
Համն Բեկնազարյան-125	(արծաթ, 2017 թ.)

## Սպոնսորներ

Տիգրան Պետրոսյան-70	(արծաթ, 1999 թ.)
Ֆութբոլի արքաները	(արծաթ, 2008-2011 թթ.)

Պելե, Էյբրին, Լև Յաշին, Ֆրանց Բեկենբաուեր,  
Ջրիկոս Բոնելի, Մարտին Կեմլիս, Յոհան Կրոյֆ,  
Միքայել Պատշինի

## ՄԾԱԿՈՒՅՑԸ

### Գիտություն, գրականություն

Հայոց գրերի գլուխ 1600-ամյակ	(ոսկի, 2002 թ.)
«Մայան ողբերգության» դրեմի 1000-ամյակ (արծաթ, 2002 թ.)	
Մատենադարան-50	(արծաթ, 2007 թ.)
Միիրան Գոչի «Գիր Դատաստան» 825-ամյակ (արծաթ, 2009 թ.)	
Գալանդի համալսարանի 725-ամյակ	(արծաթ, 2009 թ.)
Հայ գրի տպագրության 500-ամյակ	(արծաթ, 2012 թ.)
Հայկական այրութենի տառելը, 39 տեսակի (ոսկի/արծաթ, 2013 թ.)	
Լազարյան Ճեմարանի հիմնադրման 200-ամյակ	
	(արծաթ, 2015 թ.)
Հայաստանի դասմության թանգարանի հիմնադրման 100-ամյակ	
	(արծաթ, 2019 թ.)
Երևանի ուխտական համալսարանի հիմնադրման 100-ամյակ	
	(արծաթ, 2019 թ.)



## Արվեստ

Օմերայի և բալետի բաւրնոնի հիմնադրման 75-ամյակ  
(արծաթ, 2008 թ.)

Զազ Արմեն Մանուկյան (արծաթ, 2010 թ.)

Հայկական գորգ (ոսկեզօծ արծաթ/արծաթ, 2018 թ.)

Վիշապագրք, Արևագրք, Արձվագրք, Խորանագրք,  
Խաչխորան գորգ, Մեղվարուն գորգ, Կենաց ծառ գորգ,  
Վահանակիր գորգ, Որոսան գորգ, Պոռուաբերդ գորգ

Աշխարհի կերամիկան (արծաթ, 2018 թ.)

Հայկական կերամիկա, Ռուսական կերամիկա,  
Հունական կերամիկա, Չինական կերամիկա,  
Իրանական կերամիկա

## ԿՐՈՆ

### Դիցարանություն

Սասունցի Դավիթ (արծաթ, 1994 թ.)

Անահիտ Աստվածուհի (ոսկի, 1997 թ.)

Հայկ Նահապետ (ոսկի, 2007 թ.)



## Քրիստոնեություն

Նոյի վայրէջքը Արարատից (ոսկի, 1999 թ.)

Սահակ Ա Պատրի (արծաթ, 2005 թ.)

XX դարի հայոց կարողիկոսներ (ոսկի, 2008 թ.)

Սուրբ Սարգիսի գորգավար (ոսկի, 2009 թ.)

Ավետարանի տեսարանները հայ

մանրանկացությունում (արծաթ, 2010 թ.)

Ավետում, Մոգերի երկրագությունը,

Մուսֆ Երուսաղեմ, Համբարձում

Վիեննայի Սլովիայան միարանության հիմնադրման 200-ամյակ

(արծաթ, 2011 թ.)

Նոյյան տաղան (7,77 / 15,55 / 31,1 գ) (արծաթ, 2012 թ.)

Նոյյան տաղան (1 / 7,78 / 15,55 / 31,1 գ) (ոսկի, 2017 թ.)

Վենետիկի Սլովիայան միարանության

հիմնադրման 300-ամյակ (արծաթ, 2017 թ.)

## ԿՐՈՆԱԿԱՆ ԽՈՒԱՐՃԱՆՆԵՐ

Գառնի (արծաթ, 1994 թ.)

Արք. Էջմիածին (ոսկի/արծաթ, 1998 թ.)

Անի (ոսկի/արծաթ, 1998 թ.)

Հաղոյա (արծաթ, 1998 թ.)

Աղքամար (ոսկի/արծաթ, 1999 թ.)

Գանձասարի վանի (արծաթ, 2004 թ.)

Հայաստանի խաչբարեր (արծաթ, 2011 թ.)

Գնդեվանի, Գուշավանի, Կեչարիս,

Սանահին, Էջմիածին, Նորավանի

Հայկական վաներ և եկեղեցներ (արծաթ, 2012 թ.)

Արք. Էջմիածնի Սայր տաճար, Նորավանի,

Գնդեվանի, Սանահին, Գուշավանի,

Կեչարիսի վանի

## Էջմիածնի գանձեր

Սուրբ Գեղարդ	(արձար, 2013 թ.)
Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աջը	(արձար, 2014 թ.)
Մրալոյս Մյուսոնի կաքսա	(արձար, 2014 թ.)
Խոնակերաց Սուրբ Նշան	(արձար, 2016 թ.)
Սուրբ Հովհաննես Մկրտչի մասունքով խաչ	(արձար, 2016 թ.)
Սուրբ Գևորգի մասունքով խաչ	(արձար, 2016 թ.)

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Երկրաշրթի 10-ամյա տարելից	(արձար, 1998 թ.)
Պետքանի 110-ամյակ	(արձար, 2003 թ.)
ՀՀ վճռաբեկ դատարանի 10-ամյակ	(ոսկի, 2008 թ.)
Աճի-1050	(ոսկի, 2011 թ.)
Արտաքա-2200	(ոսկի, 2011 թ.)
Հայոց գեղաստանության 100-րդ տարելից	(արձար, 2015 թ.)
ՀՀ սահմանադրական դատարանի 20-ամյակ	(արձար, 2015 թ.)
Երևան-2800	(արձար, 2018 թ.)

## ԲՆՈՒԹՅՈՒՆ

### Բուսական աշխարհ

Ծիրան	(արձար, 1994 թ.)
Հայկական խաղող	(արձար, 2007 թ.)
Շաղիկների գեղեցկությունը	(արձար, 2010-2011 թթ.)
Գալանտու Արյութենկոյի, Լվածաղիկ Զանգեզուրի,	
Արուենի Հայաստանյան, Քրիում Աղամի	
Նուռ	(ոսկի, 2011 թ.)
Աշխարհի ամենահին ծառերը	(արձար, 2014 թ.)

Սիսորաւանի սոսի, Հայուրավոր ձիերի օպազմակենի,  
Հրեսակի կաղնի, Գեներալ Ծերմանի ծառը

### Կենդանական աշխարհ

Կովկասյան ջրասամույր	(արձար/դրիմնձ-նիկել, 1997 թ.)
Հայկական ոռոր	(արձար/դրիմնձ-նիկել, 1998 թ.)
Կովկասի կենդանական աշխարհ	(արձար, 2006-2008 թթ.)
Լայնականց ոզնի, Անդրկովկասյան գործ արջ,	
Կովկասյան անտառակատու, Միջերկրածովային կրիա,	
Առաջարարական ընձառյուծ, Լայնափր քաղ,	
Իշխան, Հայկական իժ, Բեզորայշան այծ,	
Հայկական մոլիբդ, Անդրկովկասյան տակրյան կորագլուխ,	
Կովկասյան քավլուն բվիկ	
Կովկասյան ընձառյուծի տարի	(արձար, 2019 թ.)

### ԲՆՈՒԹՅԱՆ ԻՆՉԵՐԴԱՆՆԵՐ

Աշխարհի լաբիրինտոսները	(արձար, 2016-2017 թթ.)
Բաստոնի լաբիրինտոսը, Վաալսի լաբիրինտոսը,	
Բարսելոնայի լաբիրինտոսը, Մազոնեի լաբիրինտոսը	

## ՍՊՈՐՏ

- Ծախմատի 32-րդ օլիմպիադա (արծաթ, 1996 թ.)  
Ծախմատի 32-րդ օլիմպիադա (արծաթ/դրինձ-նիկել, 1996 թ.)  
XVIII ձմեռային օլիմպիական խաղեր (արծաթ, 1998 թ.)  
1998 թ. ֆուտբոլի աշխարհի առաջնություն (արծաթ, 1998 թ.)  
Արագին համահայկական խաղեր (արծաթ, 1999 թ.)  
2006 թ. ֆուտբոլի աշխարհի առաջնություն (արծաթ, 2004 թ.)  
Ծախմատի 37-րդ օլիմպիադա (ոսկի, 2006 թ.)  
Մենամարտի արվեստը (արծաթ, 2011-2012 թթ.)  
Զյուրք, Ուսու, Կարասն, Կոխ  
2014 թ. ֆուտբոլի աշխարհի առաջնություն (արծաթ, 2014 թ.)  
2018 թ. ֆուտբոլի աշխարհի առաջնություն (արծաթ, 2018 թ.)

## ԽՈՒՐԴՆԱՆԱԿԵՐՊԻ ՆՇԱԽԱՆՆԵՐ

- Կենդանակերպի նշանները (արծաթ, 2007-2008 թթ./ ոսկի, 2008-2009 թթ.)  
Խոյ, Ցոլ, Երկվորյակներ, Խեցգետին,  
Արյուծ, Կոյս, Կտևոփ, Կարիճ, Աղեղնավոր,  
Այծեղջոյր, Ջրհոս, Ջկներ



# 2020 թվականի Հայաստանի Հանրապետության հուշադրամների քողարկման ծրագիրը

## Հաջա Ներսիսյան-125

Անվանական արժեքը	10 000 դրամ
Մետաղի հարզը	ոսկի 900°
Քաշը	8,6 գ
Տրամագիծը	22,0 մմ
Որակը	դրուֆ
Դրամաշուրբը	առամնավոր
Տղափանակը	300 համ

## Խրիմյան Հայրիկ-200

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղի հարզը	արծար 925°
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	դրուֆ
Դրամաշուրբը	առամնավոր
Տղափանակը	500 համ

## Ժանսեմ-100

Անվանական արժեքը	10 000 դրամ
Մետաղի հարզը	ոսկի 900°
Քաշը	8,6 գ
Տրամագիծը	22,0 մմ
Որակը	դրուֆ
Դրամաշուրբը	առամնավոր
Տղափանակը	300 համ

## Գևորգ Զավուց-150

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղի հարզը	արծար 925°
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	դրուֆ
Դրամաշուրբը	առամնավոր
Տղափանակը	500 համ

## Ժանեմ-100

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղի/հարզը	արծաթ 925°
Քաշը	28,28 գ
Չափը	28,0 x 40,0 մմ
Որակը	լավացված
Դրամաշուրը	հարք
Տղախանակը	500 hws

## Անի Վելոնյ-100

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղի/հարզը	արծաթ 925°
Քաշը	28,28 գ
Չափը	28,0 x 40,0 մմ
Որակը	լավացված
Դրամաշուրը	հարք
Տղախանակը	500 hws

## Եղիշե Թաղլոսյան-150

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղի/հարզը	արծաթ 925°
Քաշը	28,28 գ
Չափը	28,0 x 40,0 մմ
Որակը	լավացված
Դրամաշուրը	հարք
Տղախանակը	500 hws

## Հայրենական մեծ դասերազմում տարած հաղթանակի 75-ամյակ

Անվանական արժեքը	75 դրամ
Մետաղի/հարզը	արծաթ 925°
Քաշը	67,2 գ
Տապագիծը	50,0 մմ
Որակը	դրուֆ
Դրամաշուրը	առամնավոր
Տղախանակը	500 hws

## Դրամահատարանիներ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը 2019 թվականին համագործակցել է Լիսվայի դրամահատարանի և Նիդեռլանդների արքայական դրամահատարանի հետ: Բացի «Եվրասիական սննդական միուրյան 5 տարին» և «Կովկասյան ընձառյուծի տարի» արծարել հուշադրամներից, որոնց հատումն իրականացվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում, մնացած բոլոր հուշադրամները հատվել են Լիսվայի դրամահատարանում:



# Լիսվայի դրամահաւաքան

**L**իսվայի դրամահատարանը դաշտում է հիմնադրվել 1990 թ. դեկտեմբերի 10-ին, Վիլնյուսում: Նախնական շջանում դրամահատարանը հասում էր միայն շջանառու մետաղադրամներ, իսկ 1993 թ-ից սկսել է հատել նաև հուշադրամներ: Լիսվայի դրամահատարանը հիմնականում համագործակցում է այն երկրների կենտրոնական բանկերի հետ, որոնք չունեն իրենց դրամահատարանը (Հայաստան, Բելառուս, Լատվիա, Էստոնիա, Ալբանիա և այլն): Իր արտադրանքի բարձր որակի և տեխնոլոգիական նորություններ նշանակում են պատճենահանումը և առաջարկությունները առաջարկությունների համար: 2020 թ. Բեռլինում կայացած World Money Fair-ի շջանակում սացած մրցանակները դրա վար ապագույզն են:

ՀՀ կենտրոնական բանկի հետ լիսվայի դրամահաւատրանը համազուժակցում է 2001 թ-ից: Այստեղ հասվել են ՀՀ կենտրոնական բանկի 2014-2019 թթ. հուշադրամների բողարկման ծրագրերով նախատեսված բազմաթիվ հուշադրամներ, այդ թվում «Հայոց գեղասպանության 100-րդ տարեկան», «Աշխարհի լարիթինընթեր», «Ազգային դրամի 25 տարին», «Հայկական գորգ», «Երևան-2800» հուշադրամները և այլն:



# Սիրեոլանդիերի արքայական դրամահաւատան

**U**իդեղանդմերի արքայական դրամահատարանի ակունքները սկիզբ են առնում 1567 թ. Ուստի ասադրամահատարանի հիմնված դրամահատարանի գործունեությունից: 19-րդ դարի սկզբին այն վերանվանվում է Ազգային դրամահատարանի, իսկ 1999 թ-ից հայտնի է իր ներկա անվանումով: Դրամահատարանը հաջողությամբ կիրառում է մի շարժ արտնագրված սեփանկալան հնարքներ. մետաղադրամի դիման անկյան փոփոխության դեմքում դասկերների փոփոխականության, ֆոնտ-դասկերների համան և այլ սեփանուղգիաներ: Այդ եղանակները հաջողությամբ կիրառվել են ազգային դրամի 20-ամյակին նվիրված հայկական հուշադրամի համան ընթագմում:

Նիդեղլանդների արքայական դրամահատարանի գործունեությունն ունի միջազգային մեջ նշանակություն. այն հաստատել է կայուն արտադրման հարաբերություններ բազմաթիվ երկրների հետ: Համագործակցությունը ՀՀ կենտրոնական բանկի հետ սկսվել է 1997 թ-ից՝ «Ամահիս Աստվածուհի» ոսկե հիւատակային մետաղադրամի թողարկումով: Այդ ժամանակից առ այսօր Նիդեղլանդների դրամահատարանում հասվել են բազմաթիվ հայկական հուշարձաններ, որոնցից երեքը՝ «Սովետ Խորենացի-1600», «Արտաւա-2200» և «Հայ գրի տպագրության 500-ամյակ» հուշարձանները միջազգային մրցույթների մրցանակակիրներ են:

# Միջազգային մրցույթ - 2019

ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2018 թ. թողարկված

«Երևան-2800» արծաթե հուշադրամը

Ուսուաստանի Դաշնուրյունում անցկացված «Դրամների համաստեղություն-2019»

13-րդ միջազգային մրցույթում զբաղեցրել է III տեղը

«Տարվա հուշադրամը» անվանակարգում:

«Դրամների համաստեղություն-2019» մրցույթին մասնակցելու հայտնություններ 22 երկներից՝ ներկայացնելով 2018 թ. թողարկված ավելի քան 220 հուշադրամ:

Հուշադրամները գնահատվել են միջազգային ժուրիի բվեարկությամբ:

Հուշադրամի էսիզի հեղինակն է Վարդան Վարդանյանը:



ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ մասնագիտությամբ ձաւրարարել է:  
Հայսին է որդես ՀՀ նամականիւթերի և հուշադրամների դիզայներ: Նրա աշխատանքներից սկսուական շարժման 100-ամյակին նվիրված «Եփրող» նամականիւր 2009 թ. ճանաչվել է լավագույնը 50 եվրոդրաման փուտային օմերատությունունիւրի աշխատանքների մրցույթում: Ունի հուշադրամների բազմաթիվ դիզայներական աշխատանքներ: Հայ գրի տպագրության 500-ամյակին նվիրված հուշադրամը 2013 թ. ճանաչվել է լավագույնը իտալական Վիչենցա քաղաքում անցկացված 10-րդ միջազգային մրցույթում:

## Ներփին մրցույթ - 2019

2020 թ. ՀՀ կենտրոնական բանկը կազմակերպել է

«Տարվա լավագույն հուշադրամը» անվանակարգով ներփին մրցույթ:

Մրցույթին ներկայացվել են ՀՀ կենտրոնական բանկի կողմից

2019 թ. բողարկված հուշադրամները:

ՀՀ կենտրոնական բանկի աժխատակիցները նախադասվությունը սվել են  
 «Հովհաննես Թումանյան-150» ոսկե հուշադրամին (Էսիզների հեղինակ՝ Վարդան Վարդանյան) և  
 «Կոմիտաս-150» արծարե հուշադրամին, որի էսիզների հեղինակներն են  
 Վարդան Վարդանյանը (դիմերես) և Էղուարդ Կուրդինյանը (դարձերես):



# Բովանդակություն

<b>Ուղերձ</b>		2
<b>Հուշադրամներ 2019</b>		4
<b>Անվանի անհատներ</b>	Հովհաննես Թումանյան-150	6
<b>Անվանի անհատներ</b>	Գալուստ Գյուլբենկյան-150	8
<b>Մշակույթ</b>	Երևանի դեւական համալսարան-100	10
<b>Անվանի անհատներ</b>	Վարդան Մախոխյան-150	12
<b>Անվանի անհատներ</b>	Ծովակալ Իսակով-125	14
<b>Հայաստանը և միջազգային հանրությունը</b>	Եվրասիական Տնտեսական միության 5 տարին	16
<b>Մշակույթ</b>	Հայաստանի դատմության քանզարան-100	18
<b>Անվանի անհատներ</b>	Կոմիտաս-150	20
<b>Բնություն</b>	Կովկասյան ընձառյուծի տարի	22
<b>Հայաստանի Հանրապետության հուշադրամների շարերը և բողարկման տարեթվերը (1994-2019)</b>		24
<b>2020 թ. Հայաստանի Հանրապետության հուշադրամների բողարկման ծրագիրը</b>		30
<b>Դրամահատարաններ</b>		32
<b>Միջազգային մրցույթ - 2019</b>		34
<b>Ներքին մրցույթ - 2019</b>		35

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
**ՀՈՒՃԱՐԱՍԵՐ**  
2019

ՀՀ կենտրոնական բանկի հրատարակություն

Կազմեցին՝ Նունե Տերյանը, Լուսինե Այվազյանը  
Խմբագիրներ՝ Հարուբյոն Համբարձումյան,  
Ռուզաննա Վարդանյան, Գոհար Հովհաննիսյան  
Զենավորումը՝ Արամ Ուռուտյանի

Տպագիր 400

cba.am



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ